



И. Чистяков.

Издано в  
Симферополе - Феодосии  
издательство



51

1923



9228

01 SEP 2011

№ 2

«ՄԱՐՏՈՆՈՅՆ» ԳՐԱԴԱՐԱՆ

№ 2

Ա Կ Ա Ս Ա Ն

9(47.925)

4-26

31 ԱUG 2007

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ-ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ  
ԱՏՐՈՒԿԱՑՈՒԹՅԱՆ

34/185-62



Թ Ի Ց Լ Ի Ո  
Ժ. Տ. Գ. Խ. Պ. Պոլիցի. Բաժ. 4-րդ տաղավան, Պուշկ. փ. 3.

1923

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սա մի հոդված ե, վոր վերցնում ենք Թիֆլիսի «Նոր Աշխարհ» ամսագրի 1922 թ. № 1-ից: Այնտեղ ընկ. Կասյանը թվերով ու փաստերով ապացուցանում է, վոր Հայաստանը մանր տնտեսության—զերազանցապես գյուղական, մասնավորապես քաղաքային յերկիր ե: Այս յեղբակացությունը շատ կարևոր ե, քաքային յերկիր այսոր այնտեղ այսոր այնտեղ: Գյուղացիական Հայաստանում քաղաքական կազմը վորոշում ե սոցիալականը, վորոշում ե քաղաքական գիծը, տակտիկան, վերջապես՝ տնտեսական քաղաքականությունը:

Հայաստանի մանր-տնտեսական բնոյթը թելաղում ե մեզ հայ կյանքում կիրառել ուրույն տակտիկա՝ մի տակտիկա, վոր գործադրվում ե այսոր այնտեղ: Գյուղացիական Հայաստանում ամենից առաջ պետք ե զբաղվել գյուղական տնտեսության վերականգնման ու ամրացման գործով: Այդ տեսակետից Հայաստանի հողն ու ջրերը խոշոր ասպարեզ են բաց անում մեր առաջ: Իսկ ինչ վերաբերում ե ինդուստրիալիզացիային, ապա առաջ: Իսկ ինչ վերաբերում ե այսպես թե այնպես Հայաստանի մասին մտածելը վաղաժամ ե. այսպես թե այնպես Հայաստանի արդի գյուղատնտեսության զարգացումն ու բարգավաճումը, վոր մի շարք տարիների գործ ե, ինքնըստինքյան կապահովեն մեր յերկրի տնտեսության ապագան:

Այսպիսի յեղբակացություններ և անել տալիս այս գըրքույկը: Ուշիմ ընթերցողն անհրաժեշտ դասը կըստանա անշուշտ:

Դրա համար ել մենք հրավիրում յենք նրա ուշագրությունը գեպի այս աշխատությունը:

Խմբագրություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿ.-ԴԱՍԱԿԱՐԳՎԱՅԻՆ ՍՏՐՈՒԿՏՈՒՐԱՆ

I

ԱՐԵՎԻԿԱՆ ՔԱՂԱՔԱՆՈՒԹՅԱՆ ՊՈՍՏՈՒԼԱՏԸ

Զկա մի այլ ուսմունք սոցիալիզմի և ընդհանրապես  
հասարակագիտությեան մեջ, վոր այնքան ամուր կանգ-  
նած լինի իրական հողի վրա, ինչպես մարքսիստական ուս-  
մունքը։ Նա յենում ե վոչ թե վերացական սկզբունքնե-  
րից, այլ իրականության կոնկրետ յերևույթներից, տվյալ  
իրական հարաբերություններից։ Գիտական (մարքսիստա-  
կան) կոմմունիզմը «վոչխարային, սենտիմենտալ, ուսո-  
պիկական սոցիալիզմ» չե, ինչպես բնորոշում ե Մարքսը  
մանր-բուրժուական սոցիալիզմը, և վոչ ել հեղափոխական  
սպեկուլեացիա, ֆանտասմագորիա։ Նա պրոլետարական  
հասարակագիտություն ե, վոր ընձեռում ե մեզ գիտա-  
կան զենք՝ շրջապատող իրականությունն ըմբռնելու, հե-  
ղափոխական ալգեբրա՝ տվյալների մի շարք հավասարու-  
թյուններից անվորոշ գտնելու և դրան համեմատ սոցիա-  
լական պայքարի եռանդն ու ջանքը նպատակահարմար  
գործադրելու։ Ցեվ վորքան պարզ ե իրականությունը, վոր-  
քան լուսաբանված ե այն, այնքան ավելի պայքարող դա-  
սակարգն անշեղ ու անսխալ կը կատարի գործնականում  
իր դերը։

Իր կորը։  
Իրականությունը ժամանակի և տարածության մեջ  
դոյցություն ունեցող արտադրական հարաբերություններն



32185-62

Են իրենց ամբողջ վերնաշենքով։ Հասարակական աշխատանքի և սրա արդյունքների բաշխման ընթացքում ձեռակերպված հարաբերությունների տվեալ տեղում առաջ եկած երեսույթների ամբողջական կոմպլեքսն ե, վոր կաղմում ե մարդկային համակեցության իրականությունը։ Իրականությունը բարդ ե, բազմաթիվ տարրերից բաղկացած։ Նա արտահայտվում ե խառնիճաղանձ երեսույթների ցանցով, շաղկապված զանգվածով։ Եթե թերիայի մեջ տրամաբանորեն տարրալուծում ենք իրականությունը, բաժանում հորիզոնական և ուղղահայց գծերով, ապա կեանքի մեջ երեսույթները շաղկապված են բազմաթիվ աստիճանական փոխանցումներով։ Յերեսույթների այդ կոմպլեքսը ավելի ե բարդանում այն պատճառով, վոր այժմյան ժամանակներում չկա մի տեղ, ուր մարդկային համակեցության իրականությունը առանձնացած և մեկուսացած, ինքնուրույն և անկախ լինի։ Նա ենթարկված ե «դրսի աշխարհի», հասարակական այլ մարմինների իրականության փոխազդեցությանը։ Սակայն վրբքան ել տվյալ իրականությունը լինի յերեսույթների բարդ կոմպլեքս, այնուամենայնիվ նրա հիմնը, նրա կմնախըռ կաղմում են՝ հասարակական աշխատանքի տեխնիքական-տնտեսական կազմակերպմյունը յեվ արտադրական պրոցեսում համանման դերով պայմանավորված սոցիալ-դասակարգային հարաբերությունները։

Պարզ ե այդտեղից, վոր մի իրականություն ճանաչելու, իմանալու համար՝ պետք ե պարզորոշել հասարակության տնտեսական կազմությունը, նրա դասակարգային ստրուկտուրան։ Յեվյեթե պարզ իմացությունն ե պահանջում այդ, ապա վորքան ուժեղ, վորքան հրամայական պիտի լինի նույն պահանջը գործող, պայքարող դասակարգի համար։ Կառուցել տնտեսական-դասակարգային տվեալների վրա պայքարի գործելակերպ—ահա մարքսիստական քաղաքականության պոստուլատը։ Եթե մենք ուզում ենք գործելակերպ սահմանել, ուզում ենք քննու-

թյան առնել մեր վարած քաղաքականությունը և իմանալ ուղիղ ե նա թե սխալ, նպատակահարմաք ե թե վոչ, պետք ե ամենից առաջ պարզ պատկերացում ունենանք երկրի անտեսական-սոցիալական ստրուկտուրայի, հակադիր, անտագոնիստական ույժերի փոխ-հարաբերությունների մասին։

## II

## ՈՐԻՄԱԿԱՆ ԿԱՂԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանը Անդրկովկասյան մյուս երկիրների հետ միասին քաղաքականապես կցված լինելով Ռուսաստանին, կազմում եր ոռուսական կայսրության «ծայրագավառը»։ Նա վոչ միայն քաղաքական, այլև տնտեսության որիեկտ եր այդ հսկայական վիշտապի ճանկերի մեջ, վոր միայն եր այդ հսկայական հյութերը, արգելքներ հարուծնում եր նրա կենսական հյութերը, արգելքներ հարածնում նրա հարածնուն զարգայմանը։ Նա չուներ տնտեսական աղատ, ինքնուրույն գոյություն, զարգացման աղատ, ինքնուրույն պայմաններ, այլ ձեսկանորեն մըտնելով ոռուսական այսպես կոչված ազգային կամ ժողովը-դական տնտեսության սահմանների մեջ, ամբողջապես պական տնտեսության մեջ, այդ տնտեսության մեջ գորկախված եր և կաշկանդված այդ տնտեսության մեջ գորկախված եր և սուբեկտիվ հայեցողով և սուբեկտիվ հայեցողությամբ ծող որիեկտիվ լինթացքով և սուբեկտիվ հայեցողությամբ ու կամքով։ Նա ստիպված եր չնչել, ստիպված եր կատարել իր կեանքի «նյութերի փոխանակությունն» այսպես, բայց իր կեանքի պահանջը այդ ընթացքն ու կամքը։ Նրա ինչպես թելազրում ելին այդ ընթացքն ու կամքը։ Նրա նախապատերազմյան տնտեսության բնույթագիծը, այդպիսով, պայմանավորված եր ոռուսական կապիտալիզմի եռթյամբ և այն տեղով, վոր տրված եր նրան այդ կապիտալիզմի սիստեմում։

Արևելյան Յեվրոպայի հետ բաղդատած՝ կապիտալիզմը Ռուսաստանում անհամեմատ ուշ և զարգացել։ Ինչպես վոր նախակապիտալիստական տնտեսաձևերի մեջ խոր

քուս մտած մյուս երկիրներում ահազին հեղափոխական դեր ե կատարել արևմտեան բուրժուազիան, այնպես ել Ռուսաստանի նկատմամբ։ Դեռ «Կոմմունիստական Մանիֆեստի» մեջ եյին մատնանշել Մարքսն ու Էնդելու կապիտալիստական բուրժուազիայի այդ հեղաշրջող ներգործությունը. «Ինչպես վոր նա (բուրժուազիան) ենթարկել ե գյուղը քաղաքին, այնպես ել նա կախալ վիճակի մեջ ե դրել... զյուղացիական ժողովրդին բուրժուազիայից, Արևվելքը Արևվմուտքից»։ Բայց վերացնելով տնտեսական հին ձևերը, ենթարկելով հետամնաց գյուղատնտեսական երկիրները զարգացած արդյունագործական երկիրներին, Արևմուտքի կապիտալիստական բուրժուազիան ստիպում ե այդ հետամնաց երկիրներին «բնաշնչման սպառնալիքի տակ՝ յուրացնել նրա արտադրության ձևերը»։ Ռուսաստանն, ի հարկե, պիտի նույնպես ենթարկվելու այդ «որենքին և իր հերթին տարածեր այն դեպի Արևելք, դեպի «Անդր»-կովկասյան երկիրները։

Այդպիսով Ռուսաստանը ներկայանում եր մի կողմից ոտար կապիտալին ենթարկվող, իսկ մյուս կողմից՝ իր կապիտալին ենթարկող։ Կապիտալիզմը ներմուծվում (Importkapitalismus), այնտեղ, այսպես ասած՝ ակլիմատիզացիայի ենթարկվում Heimatskapitalismus) և ներմուծվում իր հեռավոր «ծայրագավառները»—զաղութները։

Ներմուծվող (իմպորտ) կապիտալիզմի սկզբնական շրջանում, վրապես ընդհանուր կանոն, ոտար կապիտալը գործում ե առևվտրական կապիտալի գեմքով։ Վերջինս ենթարկում ե երկիրը անխնա շահագործության, ծծում ե նրա բնական հարստությունը, քայլքայում գյուղաքնակշությունը, ավերում հին արտադրածերը։ Առևտրական կապիտալի համար երկիրը գաղութ ե, վոր սպառում ե հայրենական արդյունագործության արդյունքները և տալիս «մայր»-երկիրն հում նյութեր։ Այդպես եր գրությունը Ռուսաստանում մինչև 70-ական թվականները։ Սակայն Ռուսաստանն այն երկիրներից չեր, վոր միշտ մնում ե

ոտար կապիտալի ճիրանների մեջ. «բնաշնչման սպառնալիքը» հրահրում և նրան ընդունել արտասահմանյան կապիտալի արտադրական ձևերը։ Յեկ ոտար արդյունագործական կապիտալի կողքին ցցվում ե նաև հայրենական կապիտալը։ «Մի մարմին և մի արյուն» կազմելով, արդյունագործական կապիտալը զարգանում ե մեծ թափով, իր թերերի տակ առնում արտադրության այն բնագավառները, վորոնք հարուստ և փարթամ պառւղներ բնագավառներն էին ներկայացնում։ Ոտարերկրեա կապիտալի այսպես ասած նախաձեռնությամբ ծագած արդյունագործական կապիտալիզմը առաջ ե բերում առևտրական կապիտալի նախապատրաստած նյութից՝ քայլքայված գյուղացնում ե երկրի արնագործական պրոլետարիատ, զարգացնում ե այսպես տաղբական ույժերը, և այդպիսով ստեղծվում ե այսպես կոչված՝ «ազգային» կամ «ժողովրդական» հարստություն։

Ռուսական կապիտալիզմն այն գերազանց տարբերությունն ուներ արևմտյան «կապիտալիզմներից», վոր ոտար կապիտալը խոշոր, յեթէ չասենք գերիշառող, տեղ եր բռնում։ Այդ պատճառով ել ոռուսական արդյունագործական պրոլետարիատն ավելի արագ եր աճում, քան հայրենական արդյունագործական բուրժուազիան։ Երկրի արտադրական ույժերի աճումը չեր համապատասխանում «ժողովրդական» աճութերի աճումը չեր համապատասխանում «ժողովրդական» աճեցմանը, վորովհետև աշխատանքի հավեհարստության աճեցմանը, վահի, ռենտայի միջոցով հսում լցալ արժեքը՝ տոկոսների, շահի, ռենտայի միջոցով հսում լցալ արժեքը՝ վերջապես՝ այդ պատճառով ել հայելին երկրից դուրս։ Վերջապես՝ այդ պատճառով ել հայելին առաջ կապիտալի վրա գտնված ժամանակ։ Թույլ եր նաև նույն աստիճանի վրա գտնված ժամանակ։ Թույլ եր նրա ազդեցությունը պետական զեկի վրա։ Իրավացի եր կարլ կառցկին, երբ նա տակալին մարքսիստ եղած ժամանակ ասում եր իր՝ «Ամերիկացի և Ռուս բանվորը» գըրքույկում, թե ոռուսական կառավարությունն ներկայանում

ե վոչ այնքան «ապարզպալես կապիտալի գործակատար»,

ինչպես կառավարություններն Արևմտյան Յեղուպայում, — վորքան «ոտար կապիտալի գործակատար»:

III

## ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Յեթե եր մայր-երկրում ցարական (իսկ հետագայում  
ժամանակավոր և կերենսակու) կառավարությունը ներ-  
կայանում եր առավելապես ոտար կապիտալի գործակա-  
տարը, ապա «ծայրագավառներում» նա պիտի կատարեր  
իր գործակատարությունը զլխավորապես հայրենական  
կապիտալի նկատմամբ՝ վորպես «կոնվենսացիա»։ Այդտեղ՝  
«Սնդը»-կովկասում նա ջանում եր ապահովել ոռւս կապի-  
տալի գերիշխանությունը։ Ամուր պահել և ապահովել այդ  
«ծայրերի» սպառղական, ինչպես նաև հում նյութի շու-  
կան ուստի կապիտալի համար—դա նրա առաջնակարգ և  
ամենամեծ հոգսն եր։ Քանի զարգանում եր արդյունագոր-  
ծական կապիտալիզմը մայր-երկրում, այնքան ավելի դժ-  
վարաթափանց եր դառնում «անդը»-կովկասյան շուկան  
արտասահմանյան ապրանքների համար և, ընդհակառակը,  
այնքան ավելի սպառում ոռւսական ապրանքները։ Տեղա-  
կան տնախագործությունն ու արհեստագործությունը  
քայլայվում են ոռւսական գործարանային ապրանքների  
ահեղ մրցության անողորմ հարվածների տակ։ Ապրան-  
քային շուկան լայնանում ե, մեծանում են նրա կարիք-  
ները։ Ռուսական կապիտալիզմի զարգացման առաջին  
տասնամեակի ընթացքում երսպական ապրանքների ներ-  
մուծումը՝ յեթե չի ընկնում, գեթ մնում ե մեռած կետի  
վրա, այն ինչ ոռւսական ապրանքների ներմուծումը առ-  
նվազն եռապատկվում ե։ Կենտրոնական իշխանութեան  
տեղական ներկայացուցիչների ձեռք առած միջոցները  
ավելի ու ավելի են աւատկացնում մրցման հարվածները և  
զանգվածային գործունեյության շուկայում ասպարեզը  
մաքրում ոռւսական ֆաբրիկատների համար։

Բայց Անդրկովկասը վոչ միայն դառնում եւ ոռւսական ապրանքների սպառողը, այլև նրա գործարաններին հում նյութ մատակարարողը: Այսուհետեւ արտասահման ելին արտահանվում այն նյութերը, վորոնց կարիքը չեր զգում «մայր»-երկիրը՝ համապատասխան գործարաններից զուրկ լինելով (մետաքս). իսկ այն նյութերը, վորոնք պետք ելին «հայրենական» գործարաններին (բամբակ, բուրդ), հոսում ելին գեպի «Մուկով»: Հենց այդ նյութերի ձեռք ըերելն եւ, վոր լայն ասպարեզ եւ բաց անում առեւտրական կապիտալի ավերող գործունեության առաջ: Երկրի դյուդացությունն ընկնում են նրա վաշխառուական թաթերի մեջ, քայքայվում, աղքատանում եւ: Երկրի համար ստեղծվում եւ այն գաղութային դրությունը, վորի մեջ գտնվում եր մի տասնյակ տարի առաջ իսքը Ծովասատանը: Եթե վերջինս Սրեմտյան Յեվրոպայի կապիտալի կթան կոֆին եր, հիմա ուռական կապիտալի կթան կոֆին եր դառնում Անդրկովկասը:

Սակայն չսորհիվ այն հանգամանքի, վոր Անդրկովզառ  
եր մեջ պարունակում եւ և՛ այնտիսի բնական հարստու-  
թյուններ, փորոնք վոչ միայն բացակայում եյին մայր-յեր-  
կրում, այլև վորոնց շահագործման կատարելագործումը  
խոշոր խթան եր հանդիսանալու ուղարկան կապիտալիզմի  
հարաճուն զարգացմանը, մետրոպոլի կապիտալը շահագոր-  
գոված եր այդ հարուստությունների արդյունագործական  
եքսպլոատացիայով։ Հրամայական պահանջ եր՝ ստար խոշոր  
կապիտալիսների ներմուծմամբ լեռնագործական—պղնձի, մա-  
նավանդ նավթի—նախնական միջոցներով և միայն տեղա-  
կան կարիքներին բավարպություն տվող արտադրությունը  
վերացնել։ Բայց վորովհետեւ մայր-յերկիրը տակավին հա-  
րուստ չեր արտածու կապիտալներով, այդ պատճառով ել  
կրկին արտասահմանյան արդյունագործական կապիտալ-  
ներն են, վոր ներմուծվում են «Անդր»-կովկաս և ծայր  
տալիս արդյունագործական կապիտալիզմի զարգացմանը։  
Անդրկովկասի կապիտալիզմի ծննդավայրն ու կեն-

տրոնը թագուն եր՝ նավթային աշխարհը, վորտեղից և նա դարձանում և առաջ ե խաղում այն ուղիով, վոր բնական երակն եր հանդիսանում և համապատասխանում եր «մայր»-կապիտալիզմի շահերին ու ձգումներին։ Այդ ուղին արտաքին շուկայի դրուն ե՝ թաթումը Թիֆլիսի վրայով։ Հիմնական նավթային արդյունագործությունը՝ իր հետ կապված ճյուղերով միասին, առատությամբ արտադրելով հավելյալ արժեք, ստեղծում ե խոշոր հարստություններ։ Պարզ ե, վոր Անդրկովկասի բոլոր անկյուններից նա դեպի իրեն եր քաշելու տեղական կապիտալներ, վոր գոյացել ելին չարչիական կապիտալների յեկամուտների կապիտալիզացիայից։ Նա դեպի իրեն եր քաշելու նաև աշխատանքի այն ձեռքերը, վորոնց չարչիական-առևտրական կապիտալը «ազատ» եր կացուցել և ավելորդ դարձրել իրենց քայրայված տնտեսություններում։ Յերկրի ամբողջ տարածությունից նա հավաքում, կենտրոնացնում և հզորացնում ե սոցիալական յերկու ախոյեամններին, յերկու վոխերիմ թշնամիններին—կապիտալին ու աշխատանքին։ Դա ոտարյերկըյա կապիտալի միակ գրական կողմն ե, ներմուծվող կապիտալիզմի միակ ստեղծագործությունը։ Արտադրական ույժերը զարգանում եյին տնտեսության այդ բնագավառում, իսկ մյուսներում յերկրի արտադրական ույժերը մնում եյին նիրհած, վորովհետև ներքին սպառողական շուկան, ինչպես նաև հում նյութերի շուկան, պահվում եյին «Մոսկովի» ապրանքային և առևտրական կապիտալների մենաշնորհյալ ոգտագործության համար։ Ահա հենց այդ և նման հանգամանքներն են, վոր առիթ են տվել Ենպելսին 90-ական թվականներին ասելու, թե «ոռուերիտասարդ բուրժուազիան իր ձեռքի մեջ ե պահում պետությունը. անտեսական բոլոր կարևոր խնդիրներում պետությունն ստիպված ե ենթարկվել նրա ցանկություններին»։

Ապշերոնյան թերակղում «դեսանտ հանված» կապիտալիզմը, ակլիմատիզացիայի յենթարկվելով, այսինքն ներ-

մուծված կապիտալը ծնունդ տալով տեղական կապիտա-  
լին, միանալով նրա հետ և առաջ բերելով յերկրացին կա-  
պիտալիզմ, սահմանափակվում ե յերկրի նեղ շավիղով  
(Բագութիֆլս - Բաթում)՝ չնորհիվ յերկրի գաղութացին  
դրության, թողնելով այդ յերկրի խոշորագոյն մասը գո-  
ղութացին կապիտալի թաթերի մեծ կաշկանդված:

IV

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԸ ՈՒԽՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱՆԻՉՄԻ ՍԻՍԵ-  
ՄՈՒՄ

Այդ կաշկանդված վիճակի մեջ եր գտնվում Անդրկով-կասում առաջին հերթին նրա այն մասը, վոր այսոր կազմում ե Հայաստան յերկիրը։ Հեռու լինելով «լայն ձանապարհից», անտեսական զարգացման եռուն ընթացքի դիմաց պաստիվ ականատեսի դիրքում միայն գտնվելով, Հայաստանը ամենաաննպաստ պայմաններում ե քաշ տվել եր կեանքը Անդրկովկասի արդյունագործական կապիտա-միզմի ծագման և վերացման ամբողջ ժամանակաշրջանում։ Կապիտալիզի իմմանենտ հատկությունն ե հեղաշրջել հիմքե-րը, հին հարաբերությունների գերեզմանը փորում, իսկ մյուս կողմից սոցիալ-տնտեսական այդ ավերակների վրա կա-ռուցում նորը, առաջադեմը, բարձրը, ստեղծելով նոր պայ-մաններ, նոր ույժեր՝ հասարակական զարդացման հետեյալ աստիճանին անցնելու համար։ Հայաստանը զուրկ եր մնա-ցել ուռւական կապիտալիզմի ներգործությունից։ Նայեն-թարկված եր միայն առեւրական կապիտալի քայլայող բրիչի շինուածքի մուր-քը, իսկ արդյունագործական կապիտալի շինող մուր-քը չին ու զնդանը չեն աշխատել այնտեղ, վերջինս գամկած եր տեղին՝ Բագվին և սրա պերիֆերիա կազմող Բաթումին։ Նա շղթայված եր իր բնագավառում։ Ռուս յերիտասարդ բուրգուազիայի կամակատար պետությունը, չինական պարիսպներ կառուցելով արդյունագործական կապիտա-միզմի տարածման և ծավալման հանդեպ, զրկել իր Հայա-

տանի տեղբիտորիան արդյունագործական կապիտալի կիրառումից և հանձնել նրան առևտրական կապիտալին: Իսկ այստեղ, ուր նա (առևտրական կապիտալը) կազմակերպում ե կապիտալի գերիշխող ձեր, նա հանդիսանում ե թալանի մի ամբողջ սիստեմ» (Մարքս): Այդ պատճառով Բագվի արդյունագործական կապիտալի ազդեցությունը չայստանի տնտեսական կյանքի վրա յեղել ե գերազանցորեն բացասական, իսկ «Մուկովի» և սրա տեղական ագենտների առևտրական կապիտալը ցեցի պես կերել ե այդ յերկրի տնտեսական հուսվածքը:

Կապիտալն ունի վերին աստիճանի կենդանի և ուժեղ ընազներ: Բոլոր արգելքները հաղթահարելով, նա հոսում ե այստեղ, ուր վոչ միայն շահ կա, այլև ուր այդ շահը ապահովված ե ու պատկառելի, ուր հնարավորություն կախողոր եկամուներ ստեղծել ե այդ եկամուների կապիտալի զայտայով կրկնապատկվել, տասնապատկվել: Հայ կապիտալն ել չեր կարող ուրիշ տեսակ լինել: Նա հոսում, գնում եր դեպի նավթարդյունագործության աշխարհը, դեպի կապիտալիզմի շեշտված վայրը՝ Բագու-Թիֆլիս-Բաթում: Կուրծք ծեծող «ազգամեր» կապիտալին չեր հետաքրքրում, չեր գրավում չայստանը. սա չեր բաց անում նրա առջև վոչ միայն մեկին տասը, այլ նույնիսկ մեկին մեկ շահի հեռանկարներ: Հայ կապիտալը չեր կիրառվում երկրի «արդյունագործական» կյանքում վոչ միայն այն պատճառով, վոր չարչիական կապիտալը չի սիրում «տընտեսական ավանդուրա», այլև գաղութի տիրոջ—իրավունքի և ույժի վրա հիմնված—մրցման և ընդդմադրության պատճառով:

Կապիտալը «բարեգործություն» ել ե սիրում, միայն ուալ «բարեգործություն»: Նրա այդ «բարոյական բարձր հատկությունն» այն ե, վոր իր յուրացրած հավելյալ արժեքից նա բաժին է հանում իր շահը, իր եկամունը բազմապատկելու, համապատասխան ույժեր ստեծելու և իր կյանքը կոնֆորտարև դարձնելու, յերկրացին բոլոր բարիք-

ները» վայելելու հնարավորություններ ստեղծելու համար: Նա ստեղծում ե քաղաքային կուլտուրա, գիտությամբ և կրթությամբ զինված սպասավորություն: Հայ արդյունագործական կապիտալը, վորպես այդպիսին, չեր կարող չունենալ այդ հատկությունները: Նա, վորպես գերիշխող տարր Բագու-Թիֆլիս-Բաթում շրջանակում \*), ամենամեծ գործակցությունն ե ունեցել այդ շրջանակի «կուլտուրայի ստեղծագործության» մեջ, իսկ հայստանի քաղաքները նըրան չեն հետաքրքրել, վորովհետև ինքը չեր ապրում այստեղ: Նրա «ազգամիրությունը», և «ազգային բարեգործությունը» արտահայտվում եր նրանով, վորնա ձգտում եր առաջ բերել և իրեն շրջապատել հայ մտավորականությամբ, վորպերել և իրեն շրջապատել հայ մտավորականությամբ իդեոլոգիան տապեսզի վերջինիս միջոցով բուրժուական իդեոլոգիան տարածի և նրա ազդեցության տակ պահի հայ բանվորությունը և «ազգամիրաբար» շահագործի նրա աշխատանքը, «ազգի» ոգնությամբ աջող կերպով մրցի իր ոյլազգի համար մուրական կապիտալին Անդրկովկասի հայ վայրերը և մասնագործական կապիտալին համար մի կարևոր շուկա: Նա ներկայանում եր տալիզմի համար մի կարևոր շուկա: Նա ներկայանում եր թե սպառող և թե հում նյութեր առաջարկող: Յեվ հենց այդտեղ ե, վոր գաղութային առևտրական կապիտալը պիտի կատարեր իր հարուստ հունձը:

Հայստանի, ընդհանրապես «Անդր»-կովկասի գյուղացությունը կազմում եր սուսական զարգացող կապիտալիզմի համար մի կարևոր շուկա: Նա ներկայանում եր տալիզմի համար մի կարևոր շուկա: Նա ներկայանում եր ապառող և թե հում նյութեր առաջարկող: Յեվ հենց այդտեղ ե, վոր գաղութային առևտրական կապիտալը պիտի կատարեր իր հարուստ հունձը:


\* ) Հայ կապիտալի ույժի և գերիշխանության մասին թվական ավյելաները՝ Բագվի և Թիֆլիսի վերաբերյալ բերված ե Դ. Անանունի նորերս հրատարակված «Ռուսանայերի հասարակական ավանդների նորեր» (Հ. 62-66) մեջ: Ի դեպ. այդ գիրքը, զարգացումը՝ մեր զարգացման թարմ շրջանը, արժանի և առանձին ուշադրության: Մենք առանձնապես կըզբաղվենք այդ գրքով մի այլ անգամ:

Առևտրական կապիտալը չի ստեղծում անտեսական նոր ձևեր, այլ միայն քայլքայում ե հին ձևերը։ Նա կապիտալի պարագիտային ձև է, վոր ծծում ե գյուղացության հյութը և քանդում նրա տնտեսությունը։ Հայաստանի գյուղացու տնտեսությունը «կազմում» եր համառուսական «ազգային անտեսության մի մասնիկը։ Նա պարտավոր եր յենթարկվել այն անտեսական քաղաքականությանը, վոր թելագրում եր «Մուկովի» կապիտալը։ Վերջինս պետք չուներ այլևս բնատնտեսությանը (Naturalwirtschaft), այլ նրան պետք ե փողային տնտեսություն (Geldwirtschaft)։ Նրան հարկավոր ե ծախել Հայաստանի գյուղացու վրա իր գործարանային ֆաբրիկանաները և զնել նրանից հում նյութ։ Նրա պետությունը պահանջում եր գաղութի զյուղացուց զանազան տեսակի տուրքեր հնչիւն դրամով։ Գյուղացին ստիպված եր ծախել իր կարիքների համար արտադրածը, վորպեսզի վճարի տուրքերը և գնի ֆաբրիկաներ։ Այդտեղ ե ահա, վոր նրան «ոգնության» և համնում վաշխառուական և առետրական կապիտալը։ Սա ամենասոսկալի կերպով շահգործում ե նրան, չազգելով վորեե կերպով նրա արտադրական ձևերի փոփոխության վրա։ Հետևանքը լինում ե այն, վոր թե հողը և թե մարդկային բանվորական ույժը սոսկալի կերպով հյուծվում են. ընկնում ե հողի և աշխատանքի արտադրականությունը, այսինքն քայլքայվում ե գյուղատնտեսությունը, քանդվում զյուղացությունը։ Ապրելով այդպիսի պայմանների մեջ, հայկական գյուղը, պարզ ե վոր չեր կարող առաջ ըերել յերկրում՝ բուրժուազիա և պրոլետարիատ, նրան վիճակված եր միայն աղքատություն՝ պառավերիզմ։ Դեռ Մարքսն և նկատել իր նամակներից մեկում, թե այն յերկիրներում, վորոնք արտահանում են հում նյութ, արտաքին առետուրը սովորաբար միայն ուժեղացնում ե զանգվածների աղքատացումը։ Իսկ վորտեղ պառավերիզմն ե տիրում, այնտեղ հասարա-

Սյսպես՝ Հայաստանը, լինելով ոռական կապիտալիզմի գաղութ ամբողջովին յենթարկված լինելով առևտրական կապիտալի պառավերիզացիայի հետախմական պրոցեսին, իսկ Անդրկովկասի ուղիսային կապիտալիզմը ունենալով վորպես «ողանք», զերծ եր մնացել կապիտալիզացիայի յեվ պրոլետարիզացիայի առաջադիմական պրոցեսից:

V

Հայաստանը զյուղատնտեսական յերկիր է։ Դա նշանակում է թե յերկրի ազգաբնակության խոշորագույն մասը զբաղվում է այնպիսի արտադրությամբ, վոր անմիջապես կապված է հողի հետ։ Մակայն զյուղատնտեսական ենք անվանում նաև Ռուսաստանը, Վենդրիան, Լատվիան ևայլն։ Հայաստանի և, որինակի համար, Լատվիայի միջև այն տարրերությունը կա, վոր մինչդեռ Լատվիայում ազգաբնակության  $56,1^{\circ}/_0$ -ն է զբաղվում զյուղատնտեսությամբ,  $17,9^{\circ}/_0$ -ը արդյունագործությամբ, իսկ  $5,5^{\circ}/_0$  առեստրով և հաղորդակցությամբ, այն ինչ Հայաստանում այլ հարաբերություն ենք տեսնում։ Մինչչպատերազմյան վիճակագրության համաձայն՝ կովկասի հայության դասակարգային տոկոսային հարաբերությունն այսպես եր. զյուղատնտեսությամբ զբաղվում ելին  $71,3^{\circ}/_0$ , արդյունագործությամբ՝  $10,5^{\circ}/_0$ , առեստրով և հաղորդակցությամբ՝  $8,5^{\circ}/_0$ , վարձուաշխատանքով՝  $4,1^{\circ}/_0$ ։ Այժմ այդ հարաբերությունն ի հարկե փոխվել է. Յեվ փոխվել է վոչ թե այն պատճառով վոր պատերազմն և խորացրել և լայնացրել այդ շերտավորումը, կամ խորհրդային հեղափոխությունը՝ ընդհակառակը՝ վերացրել և այդ հարաբերությունը, այլ այն պատճառով, վոր այժմ խորհրդավորակի պիտի նայել վոչ թե



ազգային—ավելի ճիշտ՝ եթևողրաֆիական—և համակովկասյան, այլ զուտ սահմանափակ տերրիտորիալ տեսակետք: Կարծում եմ, իրականությունից հեռու չեյինք լինի, յեթե Հայաստանի ազգաբնակության  $90\%$ -ը հաշվեյինք գյուղատնտեսությամբ զբաղվողներ: Այսպիսով մեր յերկիրը գյուղատնտեսական ե բացարձակապես, այլ վոչ թե գերազանցորեն, ինչպես ասվում ե, որինակի համար, Լիտվայի մասին:

Սակայն գյուղատնտեսականությունը դեռ չի սպառում յերկրի սոցիալական պատկերը, Յերկիրը կարող է գյուղատնտեսական լինել՝ թե այն դեպքում, յերբ արտադրությունը հիմնված ե խոշոր ազնվատիրական սեփականության, թե այն դեպքում, յերբ արտադրությունը հիմնված ե խոշոր կապիտալիստական ձևերի վրա, և վերջապես այն դեպքում, յերբ արտադրության հիմքը կազմում են մասր գյուղացիական տնտեսությունները: Տեսնենք ինչ ե ներկայացնում Հայաստանը այդ տեսակետից:

Հին վիճակագրական տեղեկությունները, վոր վոչ միայն կազեռննի կնիք են կրում, այլև բացարձակապես տենդենցիով են, չափազանց սուղ են ու թերի: Իսկ դաշնակների կառավարությունը իր յերկու և կես տարվա գոյության ընթացքում չի կարողացել, գուցե և չի ուզեցել ստեղծել գյուղատնտեսական ստատիստիկա: Այսուամենայնիվ հսարակոր ե հին տվյալների և թվաբանական քիչ թե շատ բարդ գործողությունների հիման վրա մոտավոր կերպով գծագրել մեր յերկրի սոցիալական պատկերը, մանափանդ վոր մեզ հետաքրքրում ե վոչ թե այդ պատկերի մաթեմատիկական ճշգրտությունը, այլ մոտավոր ուրուագիծը: Այդ նպատակի համար բավական ե վերցնել Յերևանի նահանգը, այն ել վոչ ամբողջովին, այլ այն գավառները, վորոնք այժմ մտնում են Հայաստանի սահմանների մեջ, այսինքն Ալեքսանդրոպոլի, Բայազեթի, Յերևանի և Եջմիածնի գավառները:

Այդ չորս գավառի պիտանի հողերի քանակը, Յերևա-

նի պետական պալատի տվյալների համաձայն\*), հավասար ե կլոր թվով 1,171,300 դեսյատինից, վոր բաժանված եր հետևյալ կերպով.

ա) Մասնատիրական . . . . 180,210 դես.

բ) Նաղելի . . . . . 703,075 »

գ) Պետական (Կազան). . . . 288,000 »

Մասնատիրական 180 հազար դեսյատինից 119 հազ. դես. գտնվում եր նույնապես գյուղացիների ձեռքում, վորպես հողաբաժին մասնավոր հողատերերից, իսկ մնացած 61,000 դեսյատինը գտնվում եր հողատերերի ձեռքում: Թիֆլիսի պետական պալատի 1897 թվի տեղեկությունը, վոր վերաբերում ե հողային այդ անձնական մասնավոր սեփականության 29,673 դեսյատինին, տալիս ե հետևյալ խմբերը \*\*).

Սեփականությունների խմբեր	Սեփակերի քանակը	Հող դեսյա- տին	Ցուցաբանչուր սեփակ. միջին թիվը դես.
Մինչև 5 դես. ներառյալ	165	485	4
5-ից մինչև 10 »	89	635	7
10-ից » 50 »	105	2770	27
50-ից » 500 »	41	7150	175
500-ից վեր	17	18660	1098
Ընդամենը 4 գավառում	417	29700	71,2

Այդ տախտակից մենք տեսնում ենք, նախ վոր մասր հողատիրությունը (մինչև 50 դես.) կազմում ե անձնական մասնավոր հողային սեփականության խոշորագույն

\*) „Կավկազի Կալենդար“ չափանիկ 1917 թ.

\*\*) «Сборник статистических данных о землевладении в пяти губ. Зак. Края» стр. 103, 1899 г.: Ազգյուրում բերված գրուպաները չափազանց մակարածան են. մենք միացրել ենք վորոշ գրուպաները, վերցնելով վորպես չափ մասնավոր անձնական հողային սեփականության այն բաժանումը, վոր բերված ե Ն. Լենինի «Аграрная программа с.-д. в первой рус. революции» 1917 թ., стр. 17, գրքի մեջ:

մասը, վորից ավելի քան  $\frac{2}{3}$ -ը չքավոր, իսկ  $\frac{1}{3}$ -ից պակաս՝ միջակ, և երկրորդ՝ վոր Հայաստանի «լատիֆունդիան» չնչին մասն եր կազմում, ընդամենը  $2,5^0/0$  ամբողջ տարածության (Եւրոպական Ռուսաստանում լատիֆունդիաների տարածությունը կազմում եր ավելի քան  $70^0/0$  \*): Պետք ե այստեղ իսկ շեշտել նաև այն, վոր մեր այդ խոշոր հողատիրությունը համարյա բոլորովին զուրկ եր տնտեսական նշանակությունից \*\*). անձնական տնտեսությամբ զբաղվում եյին շատ քչերը, հողերը տըրվում եյին գյուղացիներին գլխավորաբար կապալով. Երևանի գավառում, որինակի համար, մասնավոր հողերի մասին մեկ Երևաններորդական մասն եր տերերի ձեռքում \*\*\*): Եթե մեր կալվածատերերն իրենց կալվածների վրա հիմնեյին կապիտալիստական ձեռնարկություններ և՝ սակավահող գյուղացիներին կապալատվությամբ «ոգնելու» փոխարեն՝ եքսպրոպրիացիայի յենթարկեցին վերջիններիս, նրանք կատարած կը լինեյին առաջադիմական դեր գյուղատնտեսության բնագավառում, առաջ կը բերեցին գյուղացության մեջ խոր շերտավորում, կը առեղջեցին աշխատավարձի և շահի հարաբերություն: Նրանց գոյությունը, ընդհակառակը, ունակցիոն դեր եր կատարում, պահպանում, նույնիսկ զարկ եր տալիս մասը աշխատավարական գյուղացությանը, պահպանում հողայիննահապետական հարաբերությունները, վորոնց ծածկոցի տակ ել շահագործում եր նրան:

\*) Ամենամեծ կալվածը Մելիք-Աղարյանին եր՝ 4897 դես., վոր գտնվում եր Նոր-Բայազեթի գավառում, և Ֆատիհասն ողմնը՝ 1257 դես., վոր գտնվում եր Երևանի գավառում:

\*\*) «Արտադրականության տեսակետից արտօնյալ դատակարգը շատ քիչ ե ոգտակար հողագործության համար և շատ քիչ աղղեցություն ունի գյուղացիների գյուղատնտեսական սովորությունների վրա» (Район Тифлисско-Кареско-Эрив. жел. дороги в экономическом и коммерческом отношениих, 1817 г. стр. 597):

\*\*\*) «Сборник статистических данных», приложение V,

Այժմ դառնանք նաղելի հողերի բաժանման:

Վերև ասացինք, վոր մեր հիշատակած չորս գավառի նաղելի հողերի քանակը հավասար եր 696,000 դես., իսկ մասնավոր հողատերերից ստացած նաղելի քանակը 119,000 դես., ընդամենն ուրեմն գյուղացության ձեռքին գտնվում եր 815,000 դես.: Ըստ նախկին ադմինիստրացիայի տեղեկության՝ այս չորս գավառի գյուղական ազգաբնակության թիվը 1915 թ. հավասար եր 670,400 չնչի \*\*): Յեթե գյուղական ընտանիքը հաշվենք միջին թվոր 5,7 հոգուց \*\*) բաղկացած, ապա կըստանանք 117,614 տուն: Հետևաբար յուրաքանչյուր տան վրա միջին հաշվով ընկնում ե 6,9 դես. հող: Բայց այդ տվյալով կարող են բավականանալ միմիայն նրանք, վորոնք կարծում են կամ ավելի ճիշտ՝ ուղղում են կեղծած լինել, թե գյուղացությունը միապաղաղ զանգված ե: Մենք պետք ե աշխատենք ուրուագծել այն շերտերը, վոր գոյություն ունեն նաև մեր գյուղացության մեջ:

Գասակարգային ստատիստիկան մեզ մոտ իր նպատակից, ի հարկե, զուրս ե համարել՝ տալու հասարակության իսկական պատկերը. Նա չի տվել շերտերի մասին վոչ մի ակնարկ. զոնե մեր ձեռքի տակ եղած աղբյուրների մեջ չկա վորեե հիշատակություն այդ մասին: Ուստի մեր գյուղացության սոցիալական շերտերն ուրուագծելու համար ստիպված ենք դիմել կողմնակի միջոցների:

Վերցնենք գյուղացության հիմնական բյուջեները: Արդուստինսկի-Դոլգորուկովը Բորչալուի գավառի իր ունականասիրության մեջ բերում ե Լոռվա շրջանի յերեք հայ գյուղական ընտանիքի բյուջեները: Նա բաժանում ե յերեք կատեգորիայի: հարուստ, միջին և աղքատ ընտանիքների բյուջեն:

\*) «Кавказский Календарь» за 1917 г.

\*\*) Համաձայն 1916 թ. գյուղատնտեսական վիճակաբության նախկին Երևանյան նահանգում 148,778 տնտեսության վրա նստած եյին 844,080 յերկուս հոգի, վոր նշանակում ե յուրաքանչյուր տնտեսության վրա 5,7 հոգի:

Հարուստ ընտանիքն ունի 15 դես. վառելահող (մյուս տեսակի հողերը թողնում եմ մի կողմը), 1400 ոռոբլու կայք, 1000 ոռուք. յեկամուտ, 1050 ոռուք. ծախք, մնացորդ՝ 50 ոռուք.: Պարտփեր չունի:

Միջին ընտանիքն ունի 5 դես. վառելահող, կայք՝ 600 ռ., յեկամուտ՝ 355 ռ., ծախք՝ 330 ռ., մնացորդ՝ 25 ռ.: Ունի պարտք 100 ռ.: Վորի համար վճարում ե տոկոս 24 ռ. տարեկան:

Աղքատ ընտանիքն ունի  $1\frac{2}{3}$  դես. վառելահող, կայք՝ 80 ռ., յեկամուտ՝ 149 ռ., ծախք՝ 156 ռ., դժբիցիտ՝ 7 ռ. \*):

Դա մեկ տվյալ: Յերկրորդ տվյալն այն ե վոր Հայաստանի չորս հիմնական գավառի գյուղացության մոտ գտնված պիտանի հողերի 815.000 դեպատինից մի քիչ պակաս՝ կլոր թվով 400.000 դեսյատինը վարելահող ե՝ բաժանված 117.614 ծիփ վրա: Ահա այդ յերկու տվյալների վրա հիմնված՝ կարելի ե մոտավոր կերպով վեր հանել մեկ գյուղի դասակարգային պատկերը:

Յենթաղրել՝ թե Հայաստանում հողագուրկ չի եղել, միանգամայն միամտություն կը լիներ: Ընտանիքների վերոյիշյալ թիվը կլոր դարձնելու համար՝ 2614 ընտանիքը համարենք հողադուրկ, իսկ մնացածը բաժանենք այնպիսի հարաբերությամբ, վոր յուրաքանչյուր ընտանիքին ընկնի միջին հաշվով այնքան վարելահող, վորքան բերված են վերոյիշյալ յերեք կատեգորիայի ընտանիքների համար: Այդպիսով կըստանանք. (Տես աղյուսակ 23-րդ երես):

Այսինքն՝ եթե գյուղը բաղկացած ե 117 ծիփոց, դրանցից երեք ընտանիքը հողագուրկ ե, 63-ը չքափոր, 48-ը միջակ, 3-ը հարուստ: Թե վորքան ե շերտերի այդ թվական հարաբերությունը համապատասխանում իրականությանը, վորքան անմիտիթար վիճակ ե ապրել հայկական գյուղը՝ յերեւմ ե այն տեղեկությունից, վոր տալիս ե

\*) «Район Тифлисско-Карсско-Эриванской жел. дороги в эк. и ком. отношениях» стр. 294—219.

չինովակիկ-հետախոսույզը՝ Արաքսի հովտի բնակիչների մասին. «Զնայած վոր բնությունը պարզեց ե Արաքսի հովտին բազմաթիվ բարեհաջող պայմաններ, վորոնք պետք եր ապահովեցին ժողովրդի բարեկեցությունը, այնուամենայնիվ մենք տեսնում ենք ամենուրեք նշանակալից չափերով չքավորություն, վոր մի քանի գեպքերում ուղղակի հասնում ե կատարյալ աղքատության...: Ինչպես արտաքին պարագաները, այնպես ել ներքին կյանքը մատնում են պարագաները, պահպահույթը կարող ե ծառայել նաև այն, վոր գյուղացուալացույց կարող ե ծառայել նաև այն, վոր գյուղացուալացույց կարող ե մեծ պարտքի տակ: Արաքսի հովտում թյունը գտնվում ե մեծ պարտքի տակ: Արաքսի հովտում

Ծիկրել թիվը	Յուրաքանչյուր ծիփն վարելահող դես.	Յուրաքանչյուր տեղորիային վարե- լահող դես.	Կատեգորիաների տոկոսային հարա- բերությունը
2.614	չ ո գ ա զ ո ւ ր կ		2%
63.000	$1\frac{2}{3}$	105.000	54 »
48.500	5	242.500	41 »
3.500	15	52.500	3 »
Ընդ. 117.614	3,4	400.000	100%

հազիվ կարելի լինի գտնել մի գյուղ, վոր ազատ լինի հարաբերից: Հաճախ գյուղի բոլոր ծիկրելի  $\frac{1}{4}$ -ից մինչև  $\frac{1}{2}$ -ը պարտքից ե լինում պարտքերով, վոր երբեմն հասձանը պահպահույթը ապահով է լիոյնը չափերի: Պետք ե նկատել, վոր այստեղ լիոյնը վերաբերում ե վոչ թե գյուղական խանութից վարձուած ապահով պարտքները վերցնելու հետեւնքով առաջացած պարտքը ապահովանքներին...: այլ այն պարտքերին, վորոնք հետեւնք են տընքերին...: այլ այն պարտքերին, վորոնք համար տարեցտառսության բայրայման և յեկամուտի հանդեպ տարեցտառսության ծախքերի (ղեփիցիտի. Ս. Կ.): Այդ հանգարի գերակշռող ծախքերի (ղեփիցիտի. Ս. Կ.): Այդ հանգարի գերակշռող ծախքերի են, վոր ստիպել են ծայրը ծայրին հասցնելու մանքներն են, վոր ստիպել են ծայրը ծայրին հասցնելու համար գյուղությունից զուրկ գյուղացուն՝ ամեն տարի դիմել

նախահաշվից դուրս փոխառության։ Այդպիսի դեպքերի համար յուրաքանչուր գյուղում կան վաշխառուներ...\*)։

Մեր գյուղացության խոշորագույն մասի չքավորության այդ պատկերը համարձակ կերպով կարելի է ընդհանուր համարել Հայաստանի նկատմամբ։ Անա թե ինչ է ասում նույն հեղինակը. «Բայց վորքան ել չքավոր լինի Արաքսի հովտի բնակչությունը, այնուամենայնիվ նա իր կարողությամբ ավելի բարձր է կանգնած, քան Յերևանի նահանգի մյուս բնակիչները. այդ պատճառով նրա վրա ավելի բարձր տուրքեր են դրված...\*\*)։

Այդպիսով Հայաստանի գյուղացության սոցիալական շերտավորման թվական հարաբերությունը պատերազմից առաջ մոտավորապես եղել է այսպես. 20% հողագուրկ ընտանիք, 54% աղքատ ընտանիք, 41% միջին ընտանիք և 30% հարուստ ընտանիք։ Ծայրահեղ շերտերը կազմել են համեմատաբար աննշան մասը, չքավոր ընտանիքները՝ կիսից ավելին, իսկ միջակները՝ կիսից պակաս։ Այդ պատճառով սոցիալական անտագոնիզմը չափազանց թույլ է եղել հայկական գյուղացության մեջ։ Ամենաուժեղ կերպով նա պիտի արտահայտվեր, ի հարկե, հողագուրկների մեջ. բայց վորովհետեւ նրանք տակավին չելին կազմում դասակարգ՝ գյուղատնտեսական բանվորություն, ուստի նրանց դասակարգային նշանակությունը հավասար եր զերոյի։ Նրանք չունեյին միենույն գերն ու շահը արտադրական պրոցեսում՝ քիչ թե շատ խոշոր գյուղատնտեսական-կապիտալիստական ձեռնարկությունների բացակայության պատճառով։ Նրանք որիեկտիվորեն համախմբված չելին և չունեյին իրենց դասակարգային գիտակցությունը պայմանավորող գոյություն։ Նրանց ակտիվ տարրերը գաղթում ելին՝ մեծ մասամբ յերկը սահմաններից դուրս՝ դեպի հարավ-կովկասյան կապիտալիստի «շրջանը», իսկ

\*) «Район Тиф.-Кар.-Әр. жел. дороги, стр. 622,

\*\*) Ibid. 42 624.

պասսիվերը՝ ցիրուցան և նահապետական ձևերի շահագործության ելին յենթարկվում։

Խոր չեր անտագոնիզմը նաև աղքատ ու միջակ գյուղացության մեջ՝ թե գեպի իրար և թե գեպի երրորդը՝ իրար գեմ նրանք դասակարգային թշնամություն կամ ներհակություն ունենալ չելին կարող, վորովհետեւ չունելին շահերի հակասություն, շահերի ընդհարումն. վորովհետեւ յեթե առաջինները վարում ելին կիսաքաղց գոյություն, ապա յերկրորդները հաղիկ հաղ ելին միայն կարողանում ծայր ծայրին հասցնել։ Իրենց անտեսական ապահովությամբ և ունակությամբ նրանք խորապես չելին տարբերվում իրարից. յերկուսն ել, իրենց աղքատ ձեռքերը «քաղաք» զրկելով, կառչած ելին մասում իրենց «թաշկենակային» սեփականությանը։ Յերկուսն ել առավել կամ նվազ չափով մնաքում ելին զրկանքների տակ, առավել կամ նվազ չափով կեղեքվում «աներևույթ» թշշկամ նվազ չափով կարգավորել կամվածատերը և վաշխառուն կարծես «ոգնում» ելին նրանց. մեկը հող եր տալիս, մյուսը փող, և այդպիսով «հայրավորություն» ստեղծում նրանց փող, առամար՝ առավել կամ նվազ չափով քարշ տալ իրենց սոսնամար՝ առավել կամ նվազ չափով քարշ տալ իրենց սոսնամար՝ առավել կամ նվազ չափով քարշ տալ իրենց սոսնամար՝ Յերկուսն ել հավասարապես յենթարկված ելին զաղութաշերկություն կատարական կալիտալի «աներևույթ» շահագործությանը։ Գաղութային եքսպլոտացիան առավել կամ նվազ չափով քայլայի եր երկուսին ել և անողոք կերպով տարածում ու խորացնում եր այդ զանգվածային քայլայումը, զանգվածային աղքատությունը՝ պատավերիզմը։ Իսկ պատերազմի ընթացքում և դաշնակների իշխանության որոք այդ երկու շերտերն ավելի ու ավելի ելին մոտեցել և իշխար նմանվել։ Համարձակ կարող ենք ասել, վոր Հայաստանի գյուղացության մեծագույն մասը – 95% – կազմված է չունիմներից։

Ուրեմն Հայաստանը վոշ միայն զոտ գյուղատնտեսա-

կան երկիր ե, այլ լեզ մանը ու աղքատ գյուղացիական տնտեսությունների յերկիր՝ զուրկ դասակարգային խոր անուագոնիզմից:

VII

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Տեսնենք այժմ, թե ինչ և հանդիսանում մեր երկրի քաղաքային աղգաբնակությունը:

Սաացինք, թե մեր քաղաքներում ապրողների թիվը  
հազիվ թե ավելի լինի, քան ընդհանուր ազգաբնակության  
 $10^0/_{\circ}$ ը. Թե ինչպիսի շերտավորումն ունի քաղաքային  
բնակչությունը, վիճակագրական տեղեկությունները նույն-  
պես լուրմ են այդ մասին։ Միայն աղմբիստրացիայի  
1915 թվի տեղեկության համաձայն՝ ամքողջ Ցեղեվանյան  
նահանգի գործարաններում և արհեստանոցներում աշխա-  
տող ձեռքերի թիվը հասնում եր 4738 հոգու<sup>\*\*</sup>)։ Թիվը այն-  
քան ել մեծ նշանակություն չեր ունենա, յեթե դրանք  
լինելին բանվորներ՝ ինդուստրիական յերկիրների իմաս-  
տով, այսինքն արդյունագործական բանվորներ։ Բայց բանն  
այն ե, վոր նրանք աշխատում ելին 2607 «Փաբրիկա-  
ներում և զավոդներում», վորոնց արտադրականության  
գումարը հավասար եր միմիայն 3,081,548 ռուբլու<sup>\*\*</sup>)։  
Բայց դրանից՝ այդ «գործարանները» և բանվորները կենտ-  
րոնացած չելին քաղաքներում, այլ սփոված ելին յերկրի  
բոլոր անկյուններում։ Մյուս կողմից մեր Փաբրիկաները  
և զավոդները, չնչին բացառությամբ, այն Փաբրիկաներից  
և զավոդներից չելին, ուր աշխատում են կատարելագործ-  
ված մեքենաներ. դրանք՝ մեծագույն մասով՝ հասարակ

<sup>\*)</sup> Այդ և հետեւալ թվական տեղեկությունները վերցված են „Կավկասի Կալենդար”-ից 1917 թ.

\*\*) Համեմատության համար հիշենք, վոր փոքրիկ լատվիացում, 1910 թ. ստատիստիկայի համաձայն, բանել են 782 գործարան 114,812 բանվորներով և 199,411,310 ռ. արտադրությամբ:

շինություններ են նախնական գործիքներով, նախնական շարժիչ միջոցներով։ Նրանց արտադրությունը լայն զանդ-վածային չեր՝ ընդարձակ շուկայի համար, այլ սահմանափակ, սոսկ տեղական շուկայի համար։ Յերևանյան նահանգին «Ճառայում» ելին 1981 ջրաղաց, վոր նշանակում ե, թե յուրաքանչյուր 11,7 քառակուսի վերսալ և յուրաքանչյուր 565 երկսեռ հողին ունեյին բրենց ջրաղացը, ուր աշխատում եր 1,2 բանվոր։ Միայն փականագործական-մեխանիկական, չուգունածուլարանային և սպիրտ-զըտող գործարաններն են, վոր իրենց 10—20 բանվորներով յուրաքանչյուրում՝ մի քիչ նմանում ելին «Քաղաքային արդյունագործությանը»։

Մեզ այստեղ, հարկավ, արտադրության տեխնիկան չէ, վոր հետաքրքրում ե, այլ հասարակական այն հարաբերությունները, վորոնք արտայայտվում են տեխնիկայի միջոցով։ Ինչպես «մեքենաների գործածության վրա հիմնված ժամանակակից գործարանը արտադրության հասարակական հարաբերություն ե» (Մարքս), այնպես ել հասարակ գործարանն ե արտահայտում արտադրության հասարակական հարաբերություն։ Թե մեր «գործարանատերերը» և թե մեր «բանվորները» այն սոցիալական կատեգորիաները չեն, վոր սովորաբար գոյություն ունեն «ժամանակակից գործարաններով» հարուստ յերկիրներում, այլ նրանք՝ իրենց խոշորագույն մեծամասնությամբ՝ մի կողմից մանր սեփականատերեր են, մանր բուրժուաներ, իսկ մյուս կողմից՝ հասարակ աշխատանքի ույժի վաճառողներ, պարզապես՝ մշակներ։ Նրանց դասակարգային հարաբերությունը նույնպես չի կարող նման լինել այն հարաբերության, վոր մենք տեսնում ենք կապիտալիստի և պրոլետարիատի միջև կապիտալիստական գործանանում։ Այստեղ, ուր կապիտալի ու աշխատանքի միջև հարաբերությունը նախնական ե, դասակարգային անտոգոնիզմը չի կարող լինել խոր, վորքան ել շահագործությունը լինի անխնան, վորով-

հետեւ բացակայում են դասակարգային գիտակցության նյութական պայմանները:

Մեր քաղաքների տնտեսական, հետեւապես և՛ կուլտուրական կյանքի խղճուկ ու թշվառ վիճակի մասին կարող ենք գաղափար կազմել նրանց յեկամուտների և ծախքերի հիման վրա: Համաձայն քաղաքային ինքնավարությունների 1915 թվի տեղեկության՝ մեր քաղաքներն ունեցել են հետեւյալ յեկամուտներն ու ծախքը (համեմատության համար բերում ենք նաև թիֆլիսն ու Բագուն):

Քաղաքների անունը	Ե Կ Ա Մ Ո Ւ Տ					Ծախք
	Եկամուտ անշարժ կայքերեց	Եկամուտ արհ. և առեր. վկայակ.	Զանազան	Բնական	Ծախք	
Նոր-Բայադեթ . . .	3.637	352	5.089	9.078	8.736	
Ալեքսանդրոպոլ . .	52.873	1.928	129.299	182.172	167.200	
Յերևան . . . . .	72.090	3.343	144.330	219.763	200.779	
Թիֆլիս . . . . .	944.569	40.707	1.973.956	2.959.232	2.997.667	
Բագուն . . . . .	841.946	71.218	12.676.163	13.589.327	13.815.426	

Մի յերկիր, վորի քաղաքների արհեստի և առևտրի վկայականներից ստացված յեկամուտը հավասար է ոռությունների, նշանակում ե, վոր նաև յեթե զուրկ չե առևտրարդյունագործությունից՝ համենայն դեպս չափազանց աղքատ և դրանով: Խոշոր առևտրական և արդյունագործական ձեռնարկություններ բացակայում են. չկա խոշոր կապիտալի գործադրություն: Մասնավոր սեփականությունը մանր և թե արդյունագործության, թե առևտրի և թե տնաաիրության մեջ: Այդտեղից ել պարզ ե, թե ինչպիսի տոկոսային հարաբերություն պիտի ունենան քաղաքային ազգաքնակության սոցիալական շերտերը. և թե վորքան մակյերես պիտի լինեն այդ շերտերը բաժանող խրամատները: Կապիտալիստ և պրոլետարիատ կոչված սոցիալական կատեգորիաները դրություն չունեն մեղ մոտ: Մեր վերին և ստորին ծայրահեղ շերտերը մի-

չին բուրժուաներն ու բանվորներն են: Յեկ ինչպես վոր զյուղաբնակչության մեջ ծայրահեղ շերտերը չնչին տուկոսն են կազմում, այնպես ել քաղաքային բնակչության մեջ միջին բուրժուաները և բանվորները կազմում են չնչին տուկոս: Մանր բուրժուազիան ե, —արհեստավորները, մանր տնատերերը, —վոր կազմում ե քաղաքային ընակչության մեծագույն տուկոսը:

Պատերազմը հիմնական փոփոխություն չի մտցրել մեր հասարակության դասակարգերի թվական հարաբերության մեջ, վորչ ել խորացրել ե նրանց բաժանող հորիզոնական գծերը: Այնպիսի յերկույթներ, ինչպիսիք են հարստության ակումուլյացիա՝ կուտակումն և հարստության կորպորացումը, վոր սովորական են համարվում կապիտալիստական երկիրներում, տեղի չեն ունեցել մեր յերկրում: Հայաստանի այն մասերում, վորոնք ենթարկվել եցին տաճակական ասպատակության թալանի, և ի հարկե ազգաքնական ասպատակության ակումուլյացիա՝ կուրցրել իր ինչքը և մերկացել ու կության  $100^0/0$ -ն ե կորցրել իր ինչքը և մերկացել ու ակուրացել: Նույն վիճակին են մասնվել նաև այն մասերը, վորոնք ենթակա յեն եղել գաշնակ խմբապետների ասպատակության ու թալանին: Իսկ այն մասերի ազգաքնական ակումուլյացիա, վորոնք ազատ են մնացել այդ մորեխային արշավանքից, չի յենթարկվել սոցիալական խոր պերտուրբացիայի, դասակարգային տեսական նորակազմությունների: Պրոցեսի սկզբում հայկական գյուղում, ճիշտ ե, նկատվում է չունեղըների շարժական ունեցվածքի (կենդանի ինվենտարի) անցումը հարուստների ձեռքը: Բայց մի կողմից թղթաղբամի ֆիկտիվության պարզվելը և արտադրություններածակելու անհնարինությունը, իսկ մյուս կողմից դաշնակ կառավարության մրցումը՝ նույնը ձեռք բերելու մեջ՝ կառավարության պիտի ունակությանը ընակությանը չհամար—վերջ պատասխանող քանակի գորք կերպելու համար—վերջ տվին այդ պրոցեսին: Աշխատավոր գյուղացին քայլայիւմ եր, իսկ կուլակը ձգտում եր պահպանել իր կայունությունը: Նույն եր և քաղաքում: Արհեստագործությունն

ու արդյունագործությունը (ի հարկե մանր) անընդհատ ընկնում եյին՝ ժողովրդական տնտեսության ընդհանուր փլուզումի պատճառով։ Ընկնում եր նաև առևտուրը և նրա տեղը բռնում սպեկուլյացիան։ Վերջինս (խոսքը, ի հարկե, մանր սպեկուլյացիայի մասին չե) կենտրոնանում եր վոչ այնքան առևտրականների, վորքան իշխող կուսակցության ճարպիկ ներկայացուցիչների, խըմբապետների և սրանց վարժապետ բարեկամների, ազգականների, ինամինների ձեռքը։ Թեև 87% ներմուծումի, ըստ դաշնակ կառավարության տեղեկության, միայն 19% ն եր «պետության» միջոցով կատարվում, իսկ 13% ը «մասնավոր առևտրականների» (մնացածը ամերիկացիների) միջոցով, այնուամենայնիվ ներմուծվածի 100-ից 99-ը անցնում եր սպառողին՝ իշխանության հետ «գաղափարական» և ինամիական կապով կապվածների միջոցով։ Պետական և կուսակցական ծածկոցի տակ թշվառության շահագործումը կատարող այդ սպեկուլյանաները, վորպես ժամանակավոր և անցողական տարրեր, չեն ունեցել սոցիալական նշանակություն, չեն կերպարանափոխել քաղաքի դասակարգերի թվական և եական հարաբերությունները և չեն կրել կապիտալի ակումուլյացիայի բնույթ։

Եզրափակենք։ Հայաստանը գերազանցորեն և բացարձակավես զյուղատեսական յերկիր ե, — զյուղական և քաղաքային մանր տնտեսությունների յերկիր։ Գյուղացությունը իր խոշորագույն մասով բաղկացած ե մանր հողագործներից, վորոնք՝ ժամանակին յենթարկված լինելով գաղութային առևտրական կապիտալի անլուր շահագործությանը, իսկ պատերազմի ընթացքում և դաշնակների իշխանության որոք ժողովրդական տնտեսության ընդհանուր քայլայման պատճառով՝ մատնված եյին չքաղության։ Ազնվականությունը ամեն տեսակետից վոչնչություն եր ներկայացնում, իսկ զյուղական բռունցքները թեև չնչին տոկոսն եյին կազմում, բայց ցեցի նման կըր-

ծում եյին զյուղական աշխատավորների քայլայված տընտեսության մաշված թելերը։

Հայաստանը չունի խոշոր արդյունագործություն՝ դադությային առևտրական կապիտալի (այժմ վշրված) կաշկանդումների պատճառով։ Նա չունի, հետևաբար, սուցիալական այն հակոտնեա կատեգորիաները, վորոնք հատուկ են արտադրության այդ եղանակին—կապիտալիստական բուրժուազիա և պրոլետարիատ։ Քաղաքային բնակչության խոշորագույն մասը կազմում են մանր առևտրականները և արհեստավորները, աննշան մասը՝ բանվորները և հատուկենտ միջին բուրժուազները։

Յերկիր սահմաններից դուրս, այսեղ, ուր հնարավորություններ կային շահավետ կերպով գործադրելու առևտրա-արդյունագործական կապիտալը և վաճառելու աշխատանքի ույժը, այդտեղ հայությունն ուներ՝ և՛ կապիտալիստ, և՛ պրոլետարներ, վորոնք խոշոր ազգեցություն են ունեցել Հայաստանի «ճակատագրի» վրա։ Յերկիր ներսում գտնվող քաղաքականավես յետամիաց մանր զյուղացությունն ու մանր քաղքենությունը, տեսած չլինելով իրենց շահերի հակասությունը և ընդհարումը դրսի «ազգային» կապիտալի հետ, գտնվում եյին վերջինիս իդեոլոգիական ազգեցության տակ, վորի փաստական հաղորդիչը Դաշնակցությունն եր։ Ինքը՝ դրսի «ազգային» կապիտալը, կապված լինելով այն յերկիրների կապիտալների հետ, ուր նա կատարում եր իր շահագործական գերը, յուրացրած ուներ այդ յերկիրների կապիտալի իմպերիալիստական ձգտումները, նայելով «իր հայրենիքի» վրա վորպես «սեփական» գաղութի։ Նրա «Բնական» սյուները «հայրենիքում» ներկայանում եին թե քաղաքի և թե զյուղի միջին բուրժուազները։ Այն ինչ առաջավոր բանվորները և զյուղացիները, վոր Թիֆլիսի և Բագվի հայ բանվորների միջոցով կապված եյին համառուսական բանվորական շարժման հետ, գտնվում եյին բոլշևիկական զաղափարների ազգեցության տակ։ Դաշ-

80 Կոմ. յուղ - 1

32

Նակների իշխանության որոք նըանց շարքերը հետզհետե  
խտացնում ելին դասակարգային հեղափոխական հոգով  
մնված պրոլետար ու ինտելիգենտ դեկավարներ և ավելի  
ու ավելի տարբում միջազգային պրոլետարական իդեո-  
լոգիայով: Յերկրի անտեսական վիճակը, նրա ներքին քա-  
ղաքական անցուղարձերը և միջազգային կացությունը,  
ինչպես նաև արտաքին աշխարհի վիթխարի դեպքերը  
դարձրին մեր այդ պրոլետարական իդեոլոգիան համաժո-  
ղովորական:



4

ՀՀ Ազգային գրադարան



NL0419772

9228